



181

C. II. 2





ԵՐԵՎԱՆ, ԱՅՍՈՐ ԵՒ ԷՊՈՒՑ

(«Մշակ» առաջին տարվա առաջին համարի առաջ-նորոգողը 1872 թ. № 1)

I

Կար ժամանակ, երբ մենք հայերս բաւականացնում էինք մեր ազգային փառասիրութեան զգացմունքը, յիշելով մեր փառաւոր անցեալը, մեր առասպելական աւանդութիւնները.... Մեր ազգի վերաբերեալ ուսումնասիրութեանը լրումն էինք տալիս ժամանակ առ ժամանակ կարգալով կամ թերթերով մեր հին կեանքի մասին պատմական հետազոտութիւնները:

Հասարակութեան բարձր դասին պատկանող անձից (մարդ թէ կին) այսօր էլ չէր պահանջվում... նորանց պահանջվում էր միայն մեր հին պատմութեանը քանի մի նշանաւոր անուններ դիտենալ, որ նա ժամանակ առ ժամանակ ուղիների առաջ անգիր էր ասում, պահանջվում էր որ նա գտնէ լեզուն էլ չիմանալով, տարվայ այն ինչ տօներին եկեղեցի գնար.... Նա պարծենում էր իր ազգի պատմութեանը, բայց աշխատում էր իր երեխաների հետ երբեք մայրենի լեզվով չը խօսել: Նա հպարտ էր իր հայրենիքի լեզվով չը խօսելը: Բայց յանցանք էր համարում ժամանակակից հայրենակիցներին մտաւոր կամ նիւթական որ և է օգնութիւն հասցնելու.... նա ասում էր իր հայրենակիցները, նոցա մէջ մեծ պակասութիւններ գտնելու, և իրան բարոյապէս իր հայրենակիցներին բարձր զգալով, չէր կամե-նում մտածել նոցա այդ պակասութիւններից բռնելու միջոցների վերայ:

Ժողովուրդը տգէտ և մոլորւած էր: Նա հայե-րէն չգիտէր, բայց եկեղեցի յաճախելով քերթե-նաւոր աղօթում էր: Նա հայ էր ասում իրան, բայց կօպէկը անգամ ինչպիսի էր իր երեխայի համար հայերէն մի գիրք առնելու:

Նա ոչինչ չէր արդիւնաբերում Հայութեան հա-մար, չէր հոգում Հայութեան մասին, բայց վեր-գում էր հաւածում էր այն երիտասարդին, որը... հեռանում էր հայութեան աւանդութիւններից.... Նա ախ քաշելով ամեն օր գանգատում էր իր հայրենակիցների պակասութիւնների վերայ, բայց մի և նոյն ժամանակ անգուցիւ և վնասակար անձ էր համարում նորան, ով որպէսական կամ բե-կայացնում էր.... նա անգոհ էր իր դրութեամբ, բայց անձնական թշնամի էր համարում նոցա, որոնք վերանորոգութիւն էին առաջարկում:

II

Երեկվայ օրը անցաւ: Այսօր ամեն տեղ սկսում են փոքր ի շատէ հայերէն սովորել:

Հիմնվում են տարրական ուսումնարաններ, ժողովուրդը իր երեխաները ուսումնարան է ու-ղարկում, բարձր դաս ուղարկում է իր որդիներ-ը համալսարան.... Գրաբար և հնութեան յի-

քերը և վերին աստիճանի եռանդոտ քարոզ է սկսում: Սկսում են լսել Սեպտեմբերի 2-ին (№ 33) առաջնորդող յօդուածում սատարի յարձակում է Ներսէս պատրիարքի վրա, որ հրատարակել էր մի վե-րին աստիճանի թրքաւոր շրջաբերական: Արծ-րունին էլ առաջին անգամ տպում է մի փոք-րիկ պատկեր թիւրքահայերի կեանքից, նիւթ վերցնելով թիւթիւսի մշակներին: Այնպէս նա հրատարակում է ռուսերէն լեզուով «Восточный Вопросъ» անունով բնօրինակ, թարգմանած «Մը-շակում» տպած իր առաջնորդողից:

1877. «Մշակը» հրատարակվում է չաբաթը երկու անգամ, երեքաթիւն և ուրբաթ օրերը: Տարեկան գինը 7 ռուբլի: Լոյս է տեսել 95 հա-մար: Տարվայ սկզբում տպվում է առաջին, հա-մեմատաբար մեծ վէպը՝ «Վարդանի վէպը»: Գլ-Ստեղծականը: Սկսվում է ռուս-թիւրքական պատերազմը: «Մշակի» աշխատութիւնը գլխաւոր-ապէս դարձած է թիւրքահայերի վրա: Այս-կերտի գաղթականութիւնը աւելի ևս զարկ է տալիս Արծրունու պրօպագանդային: «Մշակը» առաջին անգամ ժողովարարութիւն է սկսում գաղթականների օգտին:

1878. «Մշակը» դառնում է ամենօրեայ, հրա-տարակվելով չաբաթը 5 անգամ, առաջին փորձ ռուսահայերի մէջ: Տարեկան գինը 10 ռուբլի: Լոյս է տեսել 227 համար: Արծրունին տպագ-րում է իր առաջին վէպիկը, «Այնտեղ և Այս-տեղ» վերնագրով: (Թարգմանուից ռուսերէն): Գլխաւոր հարցը՝ Արեւելեան հարցն է և թիւր-քահայերը: Առաջնորդողների ամենամեծ մասը գրում է Արծրունի: Բազմաթիւ ֆեխիստները Ա-սիացու: Անդրեաս Արծրունու յօդուածները Բե-րլինի կոնգրէսի և հայ պատգամաւորների մասին: «Մշակը» ամենամեծ աշխատութեամբ արձանա-գրում է հայոց հարցին վերաբերված ամեն մի փաստ, թարգմանում է ամեն մի նշանաւոր յօ-

շատական երկրորդական դեր են խաղում, — այսօր մենք ունենք կենդանի լեզվով գրած օրա-գիրներ և գրքեր: Ամեն մի հայ երևում է իր ազգասիրական ոգով վառված:

Մի կողմից երեցան ազգասիրական բանաս-տեղծութիւններ, միւս կողմից հայրենական պատ-մութեանից առած բնական զրկածներ:

Բարձր ուսում առած երիտասարդները չափա-զանց բազմացան.... Ազգասիրական ոգով վառ-ված, նոքա այսպիսի ուսման ձիւղ են ընտրում իրանց համար, որ առանց ծանր աշխատանքի կարողանային ապահովել իրանց ապրուստը:

Ելի ինչ....

Մենք վերջապէս սկսում ենք ըմբռնել ժամա-նակի պահանջները, սկսում ենք թէ մեր ամեն զրկածներում, և թէ բնի վերայ ցոյց տալ ու-րիշներ (մանաւանդ առևտրական դասի) պակա-սութիւններ.... Մենք յափշտակմամբ պարձա-վում ենք ծերերի դէմ, նոցա միակողմանի զար-գացման, հասարակական անընդունակութեան և տղիտութեան պատճառով: Մենք հասկացանք մեր դատարարականութեան թերութիւնները, և ա-մենքս սկսեցինք (գոնէ այսպէս ենք կարծում) մանկավարժութեամբ պարագել....

III

Բայց էգուցվայ օրը մտնում է: Այն երիտասարդները, որոնք բարձր ուսում ստանալուց յետոյ վերադարձան իրանց հայրենի-քը, որոնք մեր հնացած հասարակութեան մէջ լուսւորութեան ներկայացուցիչներն են համար-վում, — կատարեցին արդեօք իրանց պարտաւո-րութիւնը:

Նոցա զրօշակի վերայ գրած է լուսւոր-րութիւն խօսքը, բայց դժբաղդապէս մենք պէտք է խոստովանենք որ նոցա պակաս է լու-սւորութեան առաքելութեան համար ամենա-նշանաւոր գործիչ: — այն է աշխատանք:

Նոքա քննադատում էին ժողովրդի առևտրա-կան դասը, բայց իրանց գործունէութիւնը և վարմունքը ոչ ոք մինչև այժմ չը քննադատեց: Նոքա յարձակվում էին ծերերի դէմ, — բայց նո-ցանից ոչ մէկը չը մտածեց որոշել հասարակու-թեան մէջ նորերի պարտաւորութիւնները:

Ես ասեցի, XIX դարի լուսւորութեան գլխա-ւոր գործիչը աշխատանքն է: Այդ գաղափա-րը ժողովուրդը չէ ըմբռնում, իսկ լուսւորու-թեան ներկայացուցիչներ, մեզ մօտ, օգուտ քա-ղելով նորա տգիտութեանց հաստատումն են նորան որ լուսւորութիւնը նոցա համար ան-մատչելի, անըմբռնելի գաղափար է.... որ իր էութեամբ նա վերացական գաղափար է, իսկ ար-տաքին կեանքում նա արտայայտում է գեղե-ցիկ հագուստով և թղթի վերայ գրած վկայա-գրով.... Ո՛չ, ասում եմ ես ժողովրդին, լուսւոր-րութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ աշխատանք, և նոքա որոնք լուսւորութիւն են քարոզում քեզ,

դուռ: Մայիսին Մէլիքզադէ տպագրում է իր առաջին վեպը թիւրքահայերի կեանքից՝ «Ջա-լալեդին»: Մանր վէպիկների տալիս է և Գ. Պա-պեան: Սկսվել (Գամառ-Վաթիպա) սկսում է գրել: Արծրունին առաջարկում է հինգ մի ընդ-հանուր բարեգործական ընկերութիւն: Հայկակ սկսում է իր թղթակցութիւնները և Պոլսից:

1879.—229 համար: Գլխաւոր հարցը—հայոց հարցն է: Արծրունու զատկասութիւնը «Թիւր-քահայերի անուսական դրութիւնը»: Խոշոր գումարներ են հաւաքվում Կ. Պոլսի Արարտեան ընկերութեան օգտին: «Ոսկի աքաղաղ» — Բաֆ-ֆի: Թատրոնական մշտական խումբը ներկայա-ցումներ է սկսում և «Մշակը» մէջ սկսվում են ընդարձակ բեցէնդիւններ: Արծրունին խիստ դատա-պարտում է այն հանգամանքը, որ թիւրքահայե-րին թէֆօրմներ տալու հարցը կապում են միայն հայ-լուսւորչականների թիւի հետ, քարոզում է որ աշխատանք հայերն էլ հայ են, որ կրօնը և ազգութիւնը տարբեր բաներ են: Այստեղից ծա-ղում է ահագին քանակութիւն «Մշակի» և «Մեղուի» մէջ, որ յայտնի է կրօնական բանակիր անու-նով:

1880.—233 համար: Թիւրքաց Հայաստանի սո-վը: Կրակոտ հրաւերներ տվաւ ամեն շնորհա-լու մասին «Մշակը» հաւաքում է մօտ 50 հա-զար ռուբլի, տպագրելով նուիրատուների ահա-գին ցուցակներ: Տպվում է Բաֆֆիի «Խնթը»: Պոլսի և Թիւրքաց Հայաստանի կեանքը պատկե-րանում է Հայկակի վանքում, Մ. Փորթուգալեա-նի, Թիւրքականի և այլ տեղերից գրած ման-րաման թղթակցութիւնների մէջ: Որվայ հարցը — սով, Շէյխ-Ուբեյդուլլայի արշաւանքը կլանում է «Մշակի» աշխատութիւնը: Տարվայ վերջին կրօ-նական բանակիրը «Մշակի» և «Մեղուի» մէջ հանում է ծայրայեղ կատաղութեան: Այդ ժա-

բայց իրանք չեն ընտելացել աշխատանքին, մե-ղաւոր են իրանց խղճմանքի առաջ....

Կը գայ ժամանակ, երբ նոքա, որոնք պար-տաւորութիւններ ունին, բայց չեն կատարել այդ պարտաւորութիւնները, կենթարկվին ապագայ սերունդի հասարակական դատաստանին:

Էգուցվայ օրը պահանջում է փոքր սերունդի համար տարրական ուսում, ժողովրդի համար ժողովրդական գիտութիւն, ուսում առածների համար ճիշդ գիտութեան ծանօթութիւն, հասա-րակութեան համար ճիշդ գիտութիւնների վերայ հիմնած մտախորհութեան եղանակ, — ամենի հա-մար աշխատանք:

Էգուցվայ օրը պահանջում է բարձր ուսում ստացածներից ոչ թէ միայն ժողովրդի ամեն դասերի կենսական երկոյթների խորը քննադա-տութիւն, այլ և իրանց սեփական անձի խղճմը-տաբար անխոնջ անձնաքննութիւնը:

IV

Երեկ մենք կտակարանական աղջ էինք Այսօր մենք ազգայնեան ենք Էգուց մենք պէտք է աշխատողներ դառ-նանք:

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

«ՄՇԱԿ» ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ

(70-ական թվականներին)

Իւրաքանչիւր սերունդի համար թանկ է ժա-մանակի մի որոշ շրջանը: Ես երբեք մոռանալ չեմ կարող 72 թվականը, երբ սկսվեցաւ հրատա-րակվել «Մշակ» լրագիրը: Ինչ կեանք էր տի-րում այն ժամանակ թիւթիւսով: Ինչ դրութեան մէջ էր գաւառների վիճակը: — Ամեն տեղ տի-րում էր մի տեսակ անշարժութիւն, մի տեսակ թմրութիւն, մի տեսակ մոռնութիւն: Յանկարծ, կարծես մի դիւթական գաւառների հարածների, զարթեցաւ կեանքը: Ոչ ոք չէր հաւատում, թէ այսպէս կարող էր լինել: Հաւատում էր միայն երիտասարդների մի փոքրիկ խումբ: Ես յիշում եմ այն դեղինիկ տարիները, այն հրաշալի գի-շերները, երբ այդ խումբը հաւաքված խմբա-գրատան մէջ, կարդում էին, ծխում էին և վի-ճում էին: Մեղանից շատերը հազներին շապիկ չունէին, մոտում էին այնտեղ բոլորովին պատա-ռոտած կօշիկներով. այսուամենայնիւ, մենք ա-մենքս էլ փառալիստի յուսով հաւատում էինք, թէ կը տիրապետենք մի մեծ ապագայի:

Սկզբում այս լրագրի շուրջը խմբվեցաւ հա-մալսարանական գիւղ օ մ ա ռ ու երիտասարդու-թիւնը: Բայց նրանք չուտով ցրուեցան, կարծես թէ, գործը խորթ թիւեցաւ իրանց: Նրանք չը հաւատաւորին այս լրագրի ճակատագրին: Միայնի-դիւթովից դուրս ինքն ու ս ու ն ե ռ ը — ինքնակա-թիւնեամբ զարգացած մանկտին, — անաշուղու-թիւնների տակ ճնշված, ամեն տեղից հալած-

մանակ էլ սկսվում է Բաֆֆիի «Կալիփ-Բէկը»:

1881.—244 համար: Երևում են Կըռօի տա-ղանդաւոր ֆեխիստները: Գլխաւոր հարցը նոյնն է: Բազմաթիւ թղթակցութիւններ Կ. Պոլսից Հայկակի, Նիկողոսեանի և Գեղամաճեանի:

1882.—244 համար: Ամենախոշոր երեկոյթը ռուսահայերի մէջ ուսուցչական ժողովն է: Ար-ծրունին մի քանի յօդուածներ է նուիրում, աղ-պագրում է իր կարգացած թէֆէրաւոր մայրենի լեզուի մասին: Կըռօի ֆեխիստները: Տպվում է Բաֆֆիի «Խամայի Մէլքութիւնները»: «Վարա-բաղի Աստղագէտը»: «Խաչագողի Յիշատակաւա-նը»: Հայոց հարցը քաղաքական աշխարհում իւրա-նում է: Սկսվում է թեպակիր: Արծրունին այլ ևս չէ կարողանում զբաղվել այդ հարցով այնպէս, ինչպէս զբաղվում էր մինչև այդ: «Մշակը» 1876 թվականից պարունակում է թանգագին նիւթեր այս հարցի ուսումնասիրութեան համար:

1883.—207 համար: Վերջանում է «Խաչագողի Յիշատակաւանը»: Հարցերը վերաբերվում են ներքին կեանքին, թիւրքահայերի և մանաւանդ Կ. Պոլսի հասարակական երեկոյթների մանրա-մասն նկարագրութիւններ: Ամառը Արծրունին հրատարակում է մի փոքրիկ յայտարարութիւն, թէ ինքը ստիպված է առժամանակ անկանօն հրատարակել «Մշակը»: Երևում են նոր գործնե-րի բազմաթիւ ինքնուրոյն պատկերներ, վէպիկ-ներ, ճանապարհորդական նկարագրութիւններ, գաւառական բազմաթիւ թղթակցիցներ: Ամենա-խոշոր հարցը կաթոլիկոսական ընտրութիւնն է: Առաջին անգամ ռուսահայերի հրապարակաւո-րութիւնը քննութեան առարկայ է դարձնում այդ հարցը: Մամուլը բաժանվում է որոշ կու-սակցութիւնների, խմբված կանդիդատների շուր-ջը: Հասարակութեան մէջ մեծ հետաքրքրութիւն և ոգևորութիւն է տիրում:

1884.—65 համար: Արծրունու և «Մշակի»

ված, բայց դարձեալ իր վեհութիւնը պահպանած մանկտին: Ահա այդ ուժերը իրանց ուսերի վրա բարձրացրին «Մշակի» դրօշակը:

Համալսարանականները հեռանալով «Մշակից» ասպարէզը մնաց ինքնուրոյններին: Այդ լրագրի խմբագիրը խիստ ճիշտ համեմատութիւն արեց, թէ նա թողեց դպիրներին և փարիսեցիներին, և իրան շրջապատեց հասարակ ձկնորսներով: — Ժողովրդի չը փչացած գաւառներով: Բայց պէտք էր ցոյց տալ հասարակութեանը, թէ այդ դիւթ-ովից դուրս ուժերով կարելի էր կազմել մի նոր չկօլա: Գործիչների առջև դրած էին ահագին դժուարութիւններ անաղին պարտականութիւն-ների հետ: Ընդ միանգամայն խոպանացած էր Աշխատանքի բաժանութիւնը չը կար: Ուզում եմ ասել, չը կային ուրիշ օրգաններ, որոնց իւրա-քանչիւրը յանձն առնելով մշակութեան մի ճիւղը, սկսէին աշխատել: «Մեղուն» խիստ ծոյլ գործակից էր, նոր բան արդիւնաբերել չէր սի-րում, իսկ «Արարատի», «Հայկական Աշխարհի» և «Գարդի» մասին խօսելն անգամ աւելորդ է: Բայց հասարակութիւնը մտաւոր մոռնող էր պա-հանջում: Եւ այս պատճառով «Մշակը» ստիպ-ված էր իր թերթերը բնաւաւորել ամեն տեսակ նիւթերով: Պարզեցիկութեան և բնութարարական ձեռք ձեռքի տուած էին ընթերցան: Վերադարձը նկարում էր պատկերներ ժողովրդի կեանքից, ցոյց տալով նրա տղեղ աշխատակութիւնները: Տնտեսագէտը հարուածում էր անխիղճ վաշխա-ռուի և հարստահարիչ կապիտալիստի յարաբե-րութիւնները մշակ դասի հետ: Վարկատը խոր-տակում էր այն սև նախապաշարմունքները, որ ծանրացած էին ամբողջի հոգու վրա, և մատու-ցանում էր բարոյական նոր մոտեցում: Առողջ խօսքը բոլորում էր կենդանի աղբիւրից և տարա-ծում էր դէպի ամեն կողմ նոր մտքեր: Գիտի-կական ոգին գործում էր իր անխնայ անդթու-թեամբ: Նա մտնում էր հեղինակի կարեւոր, վաճառականի խանութը, արհեստաւորի գործա-րանը, ծառայողի ասեանը, գիւղացու խրճիթը, մեծատան սալօնը, վարժապետի դպրոցը, կղերի մեծարանը, — մի խօսքով, կեանքի բոլոր ծալքե-րում պտղաւորում էր նա, և խաւարի միջից դուրս էր քաշում, մերկացնում էր այն ամենը, ինչ որ տղեղ էր, ինչ որ անարժան էր: Այդ բոլորը գործվում էր այն չկօլայի մէջ, որ հիմնեց «Մշա-կը», ուր երիտասարդութիւնը ուսանում էր և ուսուցանում էր:

Ես երբեք չեմ կարող մոռանալ այն աղմկալի ժողովները, որ կազմվում էին այդ լրագրի խմբ-բազմատան մէջ մի քանի տարի առաջ: Եթէ ես ունեցել եմ իմ կեանքում մի քանի ուկի ըստե-ներ, — դրանք պատկանում են այն ժամանակին: Ժողովները մէջ ոգևորված և բողբոջված վիճա-քանութիւններով տուած էին շատ անգամ մինչև դիւթակայ ժամի երկուսը: Փոքրիկ, բոլոր նիւթա-

կեանքի մէջ ամենազաւառ տարին խմբագիրը ստիպված լինելով դժադիւր իր կալուածական գործերով, քիչ է մասնակցում հրատարակու-թեան: Բայց և այնպէս, կաթողիկոսական ընտ-րութեան պայքարը մղվում է ամենայն եռան-դով: Այն տարի անկանօն հրատարակելով «Մշա-կը», Արծրունին յուլիսի 11-ին գրեց «Իմ բա-ցատրութիւնն» անունով մի առաջնորդող, որի մէջ բացատրեց իր անձնական նեղ դրութիւնը, դրկիւրով տոնային անագին կալուածներից, նա ասում էր, «Այժմ խառն գրութեան մէջ, երբ ինքս դեռ չը գիտեմ ինչ միջոցներով պէտք է ապրեմ, որտեղ կը լինի «Մշակի» խմբագրու-թիւնը, ստիպված եմ առ ժամանակ, գոնէ եր-կու ամսով դադարեցնել «Մշակի» հրատարակու-թիւնը»: Եւ իր քաղաքական առողջութիւնը վե-րականգնելու համար նա գնաց արտասահման:

1885 թվականին «Մշակ» չը հրատարակվեց: Ամառը Արծրունին վերադարձաւ արտասահմա-նից և նորից սկսեց «Մշակի» հրատարակութիւ-նը, որի համար ստիպված եղաւ նորից թողու-րութիւն ձեռք բերել: Հոկտեմբերի վերջին հրա-տարակեց «Մշակի» մի համար «Յայտարարու-թեան փոխարէն»: Այդտեղ նա ասում էր, որ 1896 թ. յունվարի մէկից կը սկսէ հրատարակել «Մշակը» առ այժմ երեք անգամ: Սկսվում էր «Մշակի» նոր «բեպական շրջանը»: Խմբագիրը այլ ևս անձնական միջոցներ չունէր, որ ծածկէր դէֆիցիտը. այժմ նա ինքն էլ պիտի ապրէր իր գրական աշխատանքով: Այդ համար մեծ ընդու-նելութիւն գտաւ, թիւթիւսով մի օրում ծախվեց 500 օրինակ:

1886.—148 համար: Արծրունին տպում է «Մի տարի Դիւցադարից» յօդուածների երկար շարք: Բայց «Մշակի» ճակատագիրը չէ փոխվել, կատաղի թշնամութիւն և ատկուտի միջոց միւս լրագիրների կողմից: Արծրունին մղում է

տիպ, որը այնքան հանրաճանաչ էր, որ անհնար էր պատկերացնել, որ այդ պատճառով այնքան հանրաճանաչ ինչքան նա: Դա յաւերական էր հրէշ է, իւրաքանչիւր ժամանակի շար ոգին, որը բնութեամբ միշտ և ամեն տեղ մի և նոյն է, բայց միշտ յարմարված պատմական վայրկեանին, և հազիւ թէ մի որ և իցէ ժամանակ այնպիսի աշուղտի զօրութեան հասած, ինչքան մեր օրերում: Մօլիերի ժամանակ աստուածապաշտութիւնը և կրօնական երկրպագութիւնն էր շինել նա իր դիմակը այժմ նոր դիմակները թիւ չունեն: Նրա ժառանգներին կարող էք պատահել բոլոր շրջաններին, բոլոր խաւերին, բոլոր կուսակցութիւններին մէջ: Մի տեղ նա առաջադէմի դիմակի տակ մարակում է հինը և նոր կեանք է քարոզում, միւս տեղ նա փրփուրը բերանին պաշտպանում է հինը, աւանդութիւնը, մասնաւորապէս սիրում է վերջին ասպարէզը: Ոչ մի չարիք չը կայ, որի դէմ այնքան դժուար էր լինել, որքան տարտիւֆութիւնը: Առաքելութեան պատիժն է դա, որը ուրուականի նման միշտ հետեւում է նրան: Միտքը ակամայ երևակայում է այն չարիքը, որ հասցնում է ժամանակակից Տարտիւֆը, որը վաղից իր նկարագրութեան համար նոր Մօլիերի է սպասում: Տարտիւֆը ժամանակակից եւրոպական հասարակութեան մէջ նշաւ աւար գործիչ է. ժամանակակից մասնաւոր մեծ մասամբ Տարտիւֆի ձեռքումն է, ինչպէս նախկին Տարտիւֆը իր բոլոր յանցանքները Ստուոու անունով էր ծածկում: Նրա այժմեան ճարպիկ ժառանգները, մտքի գիշատիչները, կեղեքում են աղատութեան, մարդասիրութեան և այլ վեճ գաղափարները: Իսկ միջադպայն յարաբերութիւններին մէջ Տարտիւֆը կատարեալ իշխող է: Նախկին Տարտիւֆը միշտ բացականչում էր. «Այսպէս է կամենում Աստուած», այժմեան միջադպայն Տարտիւֆը ամենասոսկալի յանցանքներ գործելիս, միշտ յայտարարում է, որ նա այդ բոլորը կատարում է յանուն խաղաղութեան և արդարութեան: Մօլիերի դուցէ Վերսալայի, որ իր տիպի գլխաւոր դերը դէռ ապագայումն է: Ինչ է Մօլիերի Տարտիւֆը Մետտերնիխի, Տալէյրանի, Բիսմարկի և սրանց այժմեան արժանաւոր ժառանգների առաջ:—Համեմատաբար ամենից արարած, իրանց նպատակներին հասնելու համար, սրանց արեան ծովերն էլ չեն կարող կանգնեցնել:

Այնքանքը ներկայացմանը: Դանի ինդիւր ունէր իր առաջ ալ, վարչը, նա պիտի ներկայացնէր այնպիսի տիպ, որը ինքը գերաստնութիւնը ծայրագոյն կատարելագործութեան է հասցրել, որի մէջ է և նրա ամբողջ զօրութիւնը: Տարտիւֆը համարեա մի վայրկեան չէ երևում իր սեփական կերպարանքով, նա շարունակ խաղում է: Տարտիւֆը ներկայացնող դերասանի խաղի մէջ կըրկնակի խաղ կայ: Երևում էր, որ դերասանը վերաբերվել էր իր դերին ամենայն լրջութեամբ և ուսումնասիրել էր նրան, բայց նրան չափողվեց զգալի տպաւորութիւն գործել: Նա նկարագրեց Տարտիւֆին շատ միատեսակ և չարագանց դանդաղակտ, այդ խաղի բնաւորութեան երկդիմութիւնը գուցէ թաց պիտի երևան գայ ինչպէս խաղերի, նոյնպէս և ձեւերի մէջ, միջոցաւ պ. Վրոյրի ներկայացրած Տարտիւֆը բոլոր վայրկեաններում մնում էր իր արտաքին ձեւերով մի և նոյն մարդը: Պ. Վրոյր լաւ չէր ըմբռնել այն գլխաւոր կէտը, որ Տարտիւֆի մէջ ամփոփված են երկու անձնաւորութիւն—իսկականը և այն, որին իսկականը ձգտում է ներկայացնել. ընդհանրապէս դերասանի խաղը միջակ տպաւորութիւն էր թողնում: Պ. Վրոյր ձգտում էր ներկայցնել զուտ կերպական Տարտիւֆ, միջոցաւ Մօլիերի Տարտիւֆը աշխարհական է: Գերասանը զգեստն էլ էր փարմաբոյրել այդ գաղափարին: Ճիշդ է, Մօլիերի մտադրութիւն ունէր զուտ հոգեւորական նկարագրել բայց նա այդ չարիք յայտնի հանգամանքների պատճառով, հետեւաբար սխալ է: Տարտիւֆին զուտ հոգեւորական ներկայացնելը: Պ. Թուրեան միամիտ Օրգոնի դերը կատարեց շատ կենդանի և բնական: Փայլեց իր խաղով տիկին Աստղիկ: Օրգոնի կնոջ դերում: Կօկետութեան տեսարանը, երբ նա թակարդի մէջ է ձգում իրան—խաղախնների թագաւորին—Տարտիւֆին, կատարելագործութեան հասցրեց, տիկնոջ տաղանդը կանաչութեան արտայայտութեան մէջ նոյն զօրութիւնը ցոյց տուեց, ինչպէս ամենաազդող դրամատիքական վայրկեաններում: Օրիորդ Մարի Զրաւոյժ, որ առհասարակ տիպ-ներկայացնելու մէջ չափը դժուարութեամբ է պահպանում, այս անգամ սահմանը անցավ: Նա մոռացել էր, որ աղախնի դեր է կատարում, անպատշաճ ոճ և ձեւեր էր բանեցնում, թող տուեց մինչև անգամ հրել իր տիրոջը: Ս.

ՆԱՄԱԿ ԱՂԱՏԱՅԱՑԻՑ

Գեկտեմբերի 30-ին

Այսօր, ցերեկվայ ժամի 3-ին, ժամանեց այստեղ Վենափառ Կաթողիկոսը: Վենափառն ուղեկցում էին Էջմիածնից Կորիւն վարդապետը, իսկ Գիւրջանից թիֆլիսի թեմի առաջնորդ Գեորգ արքեպիսկոպոս Սուրենեան, Ղազարի զինական քահանաները, Գիւրջանի արակտի կառավարիչ պ. Բաքրաձէ, ուստիկանութեան կողմից ձեռնարկների գլխաւոր Կեղեքիչով իր ձեռնարկներով և զաւարեցի երիտասարդների մի ասուար խումբ: Զինքով և կառքերով: Երբ Վենափառն շքախումբը մտնեցաւ կայարանին, հաւաքված բազմութիւնը, թիֆլիսից և Գանձակից եկած պատգամաւորները դիմաւորեցին Կաթողիկոսին «բարի գալուստ» և «կեցցէ»: Բացականչութեամբ, իսկ հոգեւորականները փիղօնով ընդունեցին Վենափառին: Թիֆլիսից դիմաւորելու էին եկել պ. պ. Անանեանց, Մէլիք-Աղաբեանց, բժ. Նաւասարդեան, Յ. Խաչատրեան, բազմաթիւ դրամատիկ Ղուկասեան, Ա. Երեցեան, Զ. Գրիգորեանց, և ուրիշները, իսկ Գանձակից վարդապետ Թաւադարեան իր քահանաներով: Վենափառը մի քառորդ ժամ հանգստանալուց յետոյ, երկաթուղու կայարանի առանձին սենեակում ընդունեց իրան ներկայացողներին: Կաթողիկոսի համար պատրաստված էր առանձին սալոն վաղոն: Ժամի ուղիղ 4-ին Բագրից եկող մարդատար գնացքով Վենափառ Կաթողիկոսը ձանապարհ ընկաւ դէպի թիֆլիս: Կայարանում հաւաքված բազմութիւնը բարի երթ մաղթեց հոգեւոր տիրոջ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Տօները պատճառով, «Մշակի» ներկայ տարվայ № 2 լոյս կը տեսնի յունվարի 6-ին, Զրօհ-նքի օրը:

«Մշակի» այսօրվայ համարը բաղկացած է թերթի ու կէսից:

Երեքշաբթի, գեկտեմբերի 30-ին, երեկոյան 7 ժամին, Ամենայն հայոց Կաթողիկոսը մուտք գործեց թիֆլիս: Վենափառ Կաթողիկոսին կայարանում դիմաւորեց թիֆլիսի ուստիկանապետը: Կայարանում հաւաքված էր բաւական բազմութիւն: Երկաթուղու գնացքից դուրս գալով Վենափառը նստեց կառք և հասաւ Վաղըի եկեղեցին: Ժամը 7:30-ին: Վաղըի մօտ սպասում էր ամբողջ թիֆլիսի հոգեւորականութիւնը: Փողոցում, Վաղըի բակի դրան առաջ, կանգնած էր մեծ բազմութիւն, որը Վենափառի գալուստը ողջունեց կեցցէներով: Կաթողիկոսը մտաւ տաճար, աղօթեց և ապա մտաւ առաջնորդարան, ուր դիմաւորեցին նրան Ներսիսեան զարդի հոգաբարձութիւնը, մամուլի ներկայացուցիչները և մասնաւոր անձինք: Վենափառին այցելութեան եկաւ թիֆլիսի փոխ-նահանգապետ պ. Ստեփանովիչ յայտնելով, որ նահանգապետ Բիկովի տըկարութեան պատճառով, անկարող եղաւ գալ: Երէկ Վենափառը այցելեց իշխան կառավարչապետին և օգնականին ու փոխադարձ այց ստացաւ:

Կ. Պօլսից մեզ գրում են գեկտեմբերի 22-ից. «Տեղական մի թերթ հրատարակել է Թաւրիզի մի թղթակցութիւն, որմէ յայտնվում է, թէ Գեորգեան ձեռնարանի 200,000 բուրքին Էջմիածնայ գանձարանից գողացվել են:—Լուրը շատ զերբուրում առաջ բերած է հոս: Տպագրելով Կ. Պօլսի լրագրի հաղորդած լուրը՝ Էջմիածնի գանձարանից գողացված փողերի մասին, հրապարակում ենք Էջմիածնից հերքել այդ: Այդ տեսակ լուրերը չէ կարելի առանց հերքման թողնել, մասնաւոր, որ, ինչպէս հաղորդում է մեր թղթակիցը, լուրի մէջ մասնաւոր էր արված երկու անձնաւորութիւններ:

Թիֆլիսի քաղաքային դոման իր վերջին նիստում մի շատ համակրելի որոշում կայացրեց՝ ոչնչացնել այն մեծ տոկոսը, որ վերցնում էր քաղաքը ապառիկների համար: Այդ տոկոսը հաւասար էր 12-ին: Դոման վերաւորական համարեց իր պատուի համար այդպիսի մեծ տոկոս վերցնել և իջեցրեց նրան մինչև 9: Ներկայ յունվարի 1-ից պէտք է գործադրվի այդ տոկոսը:

Յօդուտ Մօսկվայի կարօտ հայ ուսանողների ստացանք: 1) Նուր ուսուցիչ, Ոմն 5 բ. 2) Սուրբ ուսուցիչ, Ոմն 5 բ. 3) Թիֆլիսից, տ. Նաւասարդեանից՝ 2 բ. 4) Թիֆլիսից, Յովն. Ստեփանեանից՝ 100 բ. (տես «Մշակ» № 152): 5) Բաւախանից՝ Խ. Գրիգորեանի միջոցով՝ 5 բ., որ նուրիւն են՝ Խ. Գ. Գրիգորեանց, 1 բ. 50 կ. Ա. Գրիգորեանց, Հայրապետ, Համ.

բարձում, Սարգիս, Յովնանդէս, Յովսէփ, Թաւադար՝ 50-ական կողմից 6) Բաւախանից, Ոմն Մուրադի միջոցով՝ «ապագայ ուսանողներից»՝ 30 բուրքի, որ նուրիւն են Ս. 3 բ., Մեղքոյ 3 բ., Ս. Վ. 3 բ., Պ. Պ. 3 բ., Ն. Մ.՝ 3 բ., Ա. Բ.՝ 3 բ., Ա. Պ.՝ 2 բ., Ն. Մ.՝ 2 բ., Գ. Գ.՝ 1 բ., Ա. Ա.՝ 1 բ., Մ. Թ.՝ 1 բ., Ն. Ա.՝ 1 բ., Ն. Կ.՝ 1 բ., Տ. Բ.՝ 1 բ., Յ. Պ.՝ 1 բ., Պ. Մ.՝ 1 բ.: Ուրեմն նախկին 411 բուրքի 80 կ. հետ այժմ ունենք 558 բ. 80 կ.:

Երեքշաբթի, գեկտեմբերի 30-ին, Կողկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը իր ներթական նիստում ընտրեց մի յատուկ յանձնաժողով մշակելու թիֆլիսի պոլիտեխնիկումի հարցը: Անուհետեւ Ա. Քալանթար կարգաց մի գեկուցում դաշտամկների հասցրած մեծ վնասների մասին: Դաշտամկները 1897 թվին վնաս են տուել Երևանեան նահանգի Նոր-Բայազետի Նախիջևանի գաւառներում, Կարսի նահանգում, թիֆլիսի նահանգի Ախալքալաքի, Բորչալուի և թիֆլիսի գաւառներում, Գանձակի նահանգի Ղազարի և Գանձակի գաւառներում: Չեկուցանողը առաջարկեց կազմել մի յատուկ յանձնաժողով՝ փորձեր անելու մկներին բացիլներով կոտորելու ժողովը ընդունեց այդ առաջարկը:

Մեր թղթակիցը հաղորդում է մեզ Թաւրիզից հետեւեալը. «Պարսից կառավարութիւնը կարգադրել էր մարտատան ձեռքով հացթուխներից օրական 700 թումանի սե փող գնել: Չորս օրից յետոյ գնումը դադարեց, քանի որ կառավարութիւնը փոխարէնը արծաթ փող չը վճարեց, և դրամական վիճակը ենթարկվեց նախկին անկերպարան դրութեան: Այսպէս են Պարսկաստանում առհասարակ բոլոր գործերը»:

Մենք ստացանք «Արաքս» պատկերազարդ հանդէսի 1894—1895 տարեշրջանի երկրորդ գիրքը, որ հրատարակվում է այսօր ուշ: Զբարարակիչ յայտնում է, որ 1898 թվից «Արաքս» կը հրատարակվի կանոնաւոր, վեց ամիսը մի անգամ: Գիրքը, առաջինների պէս, տպագրված է չքեղ և մաքուր, պարունակում է 71 գեղարուեստական պատկերներ, որոնց մէջ և Այվազօվսկու հուշակաւոր «Տիեզերք» նկարի պատճառ: Այդ հատորի մասին մենք կը խօսենք յետոյ:

Մեզ գրում են Թաւրիզից, գեկտեմբերի 14-ից. «Արեւմտագրերը մի նոր տխուր փաստ էլ գաղթականների կեանքից: Երկու օր առաջ Ղալայի եկեղեցու բակում արշալոյսին սառած և մեռած գտնվեց մի գաղթական կնոջ մարմինը: Թշուառ գոհ»:

Ստացանք թիֆլիսի հայոց Զբարարակական ընկերութիւնից «Լուսերեսիկ» և «Ճշմարտութիւնը միշտ յաղթում է» գրքակները: Այդ գրքակներով լրանում է մանկական պատկերազարդ գրքերի առաջին շարքը, որ բաղկացած է տասն համարից: Պատկերները ինչպէս յայտնի է, պատրաստված են Գեորգիանայի Ծոռուգարտ քաղաքում:

Վ. Ա. Գ. Ի. Կ. Վ. Ա. Գ. Ի. Կ. մեզ գրում են. «Ամենքին յայտնի է ժողովրդական ուսուցչի աննախաձեռն վիճակը: Ռուստամանի միջին նահանգներում մի քանի զեմաթօններ վաղուց աշխատում են միջոց գտնել բարելաւելու ժողովրդական ուսուցչների նիւթական դրութիւնը: Այդպիսի գեղեցիկ մի ձգտում այս օրերս արդէն իրագործվեց թիֆլիսի նահանգի ուսումնարանական շրջանում: Ժողովրդական ուսումնարանների վեմերի հարցը միջոցաւ հիմնվեց «Ուսուցչների փոխադարձ օգնութեան ընկերութիւն», որի կազմակերպիչները ժողովրդական ուսումնարանների միջոցով կողմից հաստատված էր գեւ. մայիսի 18-ին: Երէկ, գեկտեմբերի 28-ին, կայացաւ անդամների առաջին ընդհանուր ժողովը: Ժողովին նպատակն էր ընտրել նախագահ, վարչութեան անդամներ, փոխանդամներ և վերահսկող մասնաժողով: Մինչև այժմ գրված են երկու սեռի 200 անդամներ, որոնցից 57 վաղեմակալից են: Ընկերութիւնը առ այժմ ունի 500 բուրքի: Նրա միջոցները գոյանալու են տարեկան անդամական ներդրումներից, ինչպէս ներկայացում, դասախօսութեան, պարահանդես, դրամական և երաժշտական երեկոյների և այլն»:

Ա. Ա. Գ. Ի. Կ. Վ. Ա. Գ. Ի. Կ. մեզ գրում են գեկտեմբերի 19-ից. «Մեր քաղաքային դպրոցը այցելեցին մի քանիսը այն ուսուցչիներից, որոնք ուղարկված են Պե-

տերբուրդի կրթական շրջանից՝ ծանօթանալու մեր երկրի մանկավարժական հիմնարկութիւնների և ժողովրդական ուսումնարաններում գործադրվող կրթական-դաստիարակական միջոցների հետ: Թիֆլիսում ծառայող ուսուցչիներից մէկը նոյնպէս եկել էր: Որքան գիտնեք, սա առաջին փորձն է այս ուղղութեամբ, որ շատ համակրելի է մտքերի փոխանակութեան տեսակէտից»:

ՆԵՐՔԻՆ-ԱՌՏԱՑԻՑ մեզ գրում են. «Այստեղ կառավարական տարրական դպրոց հիմնելու հարցը վերջնականապէս վճռված է և տեղական հայ հասարակութեան համախոսակամը, կառավարութեան առաջարկութեան համաձայն, արդէն կազմված է: Գարնանը հայերի մասում պէտք է ձեռնարկվի ուսումնարանի շէնքի կառուցման, որի համար կառավարութեան կողմից յատկացված է 1500 բուրքի: Հայոց հասարակութիւնը, ինչպէս լուծւ է, մտադիր է դպրոցին կից կառուցանել նաեւ մի առանձին շինութիւն՝ Ներքին-Ախտայի գիւղական հասարակութեան շինական դաստիարակ տեղաւորելու համար: Ուսումնարանի կառուցման գործում տեղական ժողովուրդը իր պարտականութիւնն է համարում աշխատել թէ քանորդներ տալով և թէ սպիւրով կրելով՝ քար, հող, ջուր և այլն»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՐԿԻՆԻՍԻՆՆԵՐ

«Standard» լրագրի յատուկ թղթակիցը Կ. Պօլսից հեռագրում է գեկտեմբերի 29-ից. «Հայոց պատրիարքը մինչև հիմա պատասխան չէ ստացել իր յիշատակագրին, որ անցեալ շաբաթ մատուցել էր ս. Վ. Թ. Թ. ինչպէս նա մի տեսակցութիւն ունեցաւ արդարադատութեան և կրօնական գործերի միջնորդի հետ, որը զանազան ակնարկութիւններով հասկացրեց թէ կառավարութիւնը միտք ունի պայմաններ առաջարկել իր կողմից էլ: Միմիտքը խօսք բացեց Սիւսի կաթողիկոսի մասին, որին պատրիարքը նշանակած էր մի ուրիշ՝ Բ. Դրան կողմից ինքնիշխանար կարգված եպիսկոպոսի փոխարէն: Կառավարութեան համար որոշ կարեւորութիւն ունի, որ Սիւսի աթոռի վրա իր աբարածից մէկը հաստատվի և միմիտքը բաղձնաք յայտնեց, որ այդ թեմի գործեր իրանց ընկածը դրութեան ստանալուց քայքայ միմիտքը առաջարկված ընտրութեան պայմաններն այնպէս էին, որ պատրիարքը բանակցել իսկ չէր կարող: Երկու կայ, թէ այս անհամաձայնութիւնը պատրիարքի աղեքսագրի անաւտոթեան պատճառ պիտի դառնայ: Այսօր պատրիարքը յատուկ մարդ ուղարկեց պալատ, իմանալու համար հետեւեալը»:

ՆՈՐ ՏԱՐԻՆ ԵՐԹՈՒՅՈՒՄ

Այնքան այն ժամանակները, երբ ամբողջ Եւրոպայի անհամբերութեամբ սպասում էր նոր տարուին, որպէս իր լրի եւրոպական վեհապետների ձառեւ և իմանայ թէ ինչ է բերում իր հետ նոր տարին—խաղաղութիւն, թէ պատերազմ, երջանկութիւն, թէ թշուառութիւն: Մինչև 1860 թ. եւրոպական թագաւորները սովորութիւն ունեին նոր տարվայ օրը ձառել արտասանել և բացատրել քաղաքական աշխարհի վիճակը, գծադրել այն քաղաքականութիւնը, որին պէտք է հետեւին կառավարութիւնները: Սակայն, այժմ այլ ևս այդ տեսակ ձառել, գոնէ աշխիւղծ ձառել չեն արտասանում: Նոր տարու առիթով արտասանած այժմեան ձառելից շատ դժուար է որ և է եղականութիւն անել ոչ միայն հեռաւոր ապագայի, այլ և վաղվայ մասին: Եթէ հաւատարմութիւնը այդ ձառելին, ամեն ինչ խաղաղ է, լաւ, և որ և է վտանգ չէ սպասում...

Գեւ. մ. անի Կ. Ա. Գ. Ի. Կ. նոր տարու առիթով կայեւրական պալատում եղած ընդունելութիւնները անցան առանց քաղաքական որ և է ցոյցերի: Գեորգեանական հասարակութիւնը այդ օրը մի քիչ յուզվեց միայն մի կեղծ լուրի պատճառով իբր թէ Բեւեմարկը մտել է, բայց այդ լուրը շուտով հերքվեց:

Ա. Ա. Գ. Ի. Կ. Ու. Գ. Ի. Կ. մի քիչ տխուր ընդունեց նոր տարին: Վ. Թ. Թ. ինչպէս նաեւ տարվայ առիթով լի են պէսիմիստ հայեացքով: Գրեթէ ամենքը այն կարծիքն են յայտնում, թէ Ամերիկայի մրցման և մեծ պետութիւնների մէջ եղած գոման պատճառով, սպառնա շատ էլ միմիտքական չէ երևում:

Պարանսի Կ. Ա. Գ. Ի. Կ. մայրաքաղաքում, նոր տարվայ առիթով եղած դիւլամատիական ընդունելութեան ժամանակ դիւլամատիական մարմն:

